ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«08» մայիսի 2019 թվականի № 98-Ա

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Արզնի առողջարան» ՓԲ ընկերության հետ 2012 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված թիվ ՊՎ-147 «Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով» ընդերքօգտագործման պայմանագրի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Արզնի առողջարան» ՓԲ ընկերության 2019 թվականի ապրիլի 01-ի թիվ 240 գրությունը, հաշվի առնելով ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ա հրամանը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ՝

1. «Արզնի առողջարան» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում (ՇԱԹՎ-29/147 թույլտվությունում և ՊՎ-147 ընդերքօգտագործման պայմանագրում) կատարել հետևյալ փոփոխությունը՝

- ավելացնել թիվ 6/64 հորատանցքից տրամադրված ջրաքանակը՝ դարձնելով այն 20000 մ^3/տարի:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-147 պայմանագրի փոփոխությունը, ծանուցել դիմումատուին և հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը (ՇԱԹՎ-29/147 թույլտվության, ՊՎ-147 ընդերքօգտագործման պայմանագրի).

3) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման իրավունքում փոփոխություններ կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5/8/2019

X

VERIFIED OCSP 5/8/2019 19:30:01 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ԿԱՏԱՐՈՂ՝
ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ